



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

“ 17” հուլիսի 2013թ

№ 110-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2007ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 9-Ի N28-Ա, 2009ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի N190-Ա, 2011ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N83-Ա, 2011ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 11-Ի N119-Ա, 2012ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 7-Ի N14-Ա, 2012ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N15-Ա ԵՎ 2013ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10 N47-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով և 70-րդ հոդվածի 2-ին մասի 1-ին ենթակետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2013թվականի հուլիսի 10-ի <<Վ.Հակոբյանին Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետ նշանակելու մասին >>N697-Ա որոշման, **որոշում եմ՝**

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2007թվականի մարտի 9-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովի կազմը հաստատելու մասին>> N28-Ա, 2009թվականի նոյեմբերի 17-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի փոփոխման մարզային հանձնաժողովի կազմը հաստատելու մասին>> N190-Ա, 2011թվականի ապրիլի 30-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում զորահավաքային մարմին ստեղծելու, դրա անհատական կազմը և կանոնադրությունը հաստատելու մասին>> N83-Ա, 2011թվականի հուլիսի 11-ի <<Երեխայի տարիքը որոշող մարզային հանձնաժողովի կազմը և լիազորությունները հաստատելու մասին>>, 2012թվականի փետրվարի 7-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների և դրանց անբաժանելի մասը հանդիսացող հողաշինարարական գործի կազմման աշխատանքները համակարգող, մշտական գործող հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին>> N14-Ա և 2012թվականի փետրվարի 15-ի <<Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման մարզային հանձնաժողովի անհատական կազմը և աշխատակարգը հաստատելու մասին>> N 15-Ա և 2013թվականի ապրիլի 10-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի 2014-2017թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի կազմման և իրականացման մարզային զարգացման հանձնաժողովի, ծրագրի մոնիտորինգի և գնահատման, ոլորտային աշխատանքային խմբերի անհատական կազմերը և ծրագրի կազմման ժամանացույցը հաստատելու մասին>> N47-Ա որոշումներով հաստատված հավելվածներում <<Ս.Խաչատրյան>> բառերը փոխարինել <<Վ.Հակոբյան>> բառերով:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2013թվականի հունիսի 13-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2012թվականի փետրվարի 7-ի N14-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> N96-Ա որոշումը:

3. Աշխատակազմի ղեկավարին ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ



Կ. ՀԱԿՈԲՅԱՆ

2013թ. հուլիսի 17
ք. Կապան